UCOM X UTRAVEL ԱՄԱՌԱՅԻՆ ԱՐՇԱՎԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ucom x uTravel ամառային արշավի շրջանակներում խաղարկության (այսուհետ՝ Խաղարկության) իրականացման սույն պայմաններով (այսուհետ՝ Պայմաններ) սահմանվում են Խաղարկության անցկացման կարգը, պայմանները, սահմանափակումները:

1.2. Մասնակցելով Խաղարկությանը՝ Դուք հաստատում եք, որ ծանոթացել եք Պայմաններին և համաձայն եք դրանց:

1.3. Խաղարկությունը համարվում է մարքեթինգային միջոցառում:

1.4.Խաղարկությունն իրականացվում է «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերության կողմից (այսուհետ՝ Կազմակերպիչ):

1.5.Խաղարկությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

2. Խաղարկության մասնակիցներ

2.1. Խաղարկությանը կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող, 18 տարին լրացած ֆիզիկական անձինք:

2.2. Կազմակերպչի աշխատակիցները և նրանց ընտանիքի անդամները չեն կարող մասնակցել Խաղարկությանը:

3. Խաղարկության անցկացման կարգը

3.1. Խաղարկությանը մասնակցելու համար անհրաժեշտ է 2026 թվականի օգոստոսի 24-ից 2026 թվականի սեպտեմբերի 30-ը (ներառյալ) ընկած ժամանակահատվածում՝

- Ակտիվացնել uTravel ինտերնետ ռոումինգ փաթեթներից ցանկացածը՝ 1GB, 5GB, 8GB, 12GB, ավելին:

3.1.1. Նույն օգտահաշվից Խաղարկության մասնակցությունը **մի քանի անգամ չի սահմանափակվում, սակայն հաղթող հնարավոր է ճանաչվել միայն մեկ անգամ**: Ընդ որում, Խաղարկության մասնակցին, ում անունն արդյունքների ամփոփման ընթացքում հայտարարվել է մեկից ավելի անգամ, կտրամադրվի **առաջինը** հայտարարված նվերը՝ անկախ տվյալ մասնակցի կողմից հետագայում հաղթած նվերների արժեքից և քանակից:

3.2. Խաղարկությունը կամփոփվի **2026 թվականի հոկտեմբերի 15-ին**: Համապատասխան տեղեկությունը կտեղադրվի նաև Կազմակերպչի պաշտոնական սոցիալական էջում՝ Ucom-ի ինստագրամյան ալիքով և Ucom-ի պաշտոնական կայքում:

3.3. Խաղարկության հաղթողները կընտրվեն պատահականության սկզբունքով՝ Ucom-ի ինստագրամյան ալիքով ուղիղ հեռարձակման ժամանակ:

3.4. Հաղթողների ընդհանուր թիվը սահմանվում է 35 հոգի: Հաղթողները կստանան Պայմանների 5.1. կետով նախատեսված նվերներից որևէ մեկը:

3.5. Խաղարկության արդյունքների ամփոփման արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցներին Ucom-ի կողմից կուղարկվի SMS հաղորդագրություն՝ վերջիններիս հաղթող ճանաչված լինելու, նվերը ստանալու վայրի և ժամանակահատվածի վերաբերյալ:

3.6. Խաղարկության արդյունքների ամփոփման արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցները իրենց նվերները ստանալու համար պետք է անձամբ մոտենան Կազմակերպչի՝ Հյուսիսային պողոտա 1/2 հասցեում գտնվող վաճառքի և սպասարկման գրասենյակ:

3.7. Հաղթող ճանաչված մասնակիցների կողմից պետք է ներկայացվի SMS հաղորդագրությունը և անձը հաստատող փաստաթուղթը:

3.8. Հաղթող ճանաչված մասնակիցների կողմից նվերն անձամբ ստանալու անհնարինության դեպքում, նվերը կարող է ստանալ վերջինիս կողմից պատշաճ լիազորված անձը՝ օրենքով սահմանված կարգով տրամադրված լիազորագրով և անձը հաստատող փաստաթղթով:

3.9. Նվերները ենթակա չեն փոխարինման կամ փոխանակման գումարի հետ:

3.10. Կազմակերպչին իրավունք է վերապահվում փոփոխել Խաղարկության Պայմանները՝ հաշվի առնելով ստեղծված իրադարձությունները՝ դրա մասին նախապես տեղեկացնելով իր պաշտոնական կայքէջում և սոցիալական էջերում:

4. Խաղարկության անցկացման ժամկետները

4.1. Խաղարկությունն անց է կացվելու **2026 թվականի օգոստոսի 24–ից 2026 թվականի սեպտեմբերի 30-ը (ներառյալ)** ընկած ժամանակահատվածում:

4.2. Խաղարկության արդյունքների ամփոփման ժամկետների վերաբերյալ տեղեկությունը կտրամադրվի Պայմանների 3.5-րդ կետով սահմանված կարգով:

5. Նվերների ցանկը

5.1. Նվերների ցանկը հետևյալն է.

Ապրանքատեսակ	Քանակ (հատ)
Փոքր ճամպրուկներ՝ 10 կգ (առավելագույնը) քաշով	5
Travel Packs (բրենդավորված ճամփորդական իրեր՝ tote bag (կտորե բրենդավորված պայուսակ), շիշ, թերմալ ջուր՝ 50 մլ, ճամփորդական բարձ, շուրթերի բալզամ)	30

6. Կազմակերպչի տվյալները՝

«Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերություն,

գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մանանդյան փող., շ. 33/8,

պաշտոնական կայքէջ՝ www.ucom.am

պաշտոնական սոցիալական էջեր՝

https://www.facebook.com/UcomArmenia

https://www.instagram.com/ucom_official

հեռախոսահամար՝ +374 (11) 444 444